Նար-Դոս

Մարդ

Երբ առաջին անգամ արհամարհելով,
Քո սուրբ խորհուրդը ես չընսեցի,
Եվ անզուսպ կրքերիս ստրուկ դառնալով,
Մշտապես արդեն ես մեղանչեցի.
Եվ այդ ժամանակ, երբ, խիստ նզովելով,
Ձգեցիր ինձ այս աշխարհը անել,
Որը լի է անթիվ վիշտ ու հոգսերով,
Եվ ուր մարդ կարե արցունքից խեղդվել.
Այն ժամանակվանից մինչ ներկա րոպես
Ես կրում եմ այդ նզովքն անդադար
Եվ չունեմ իրավունք տրտնջալ բախտես,
Զի այդ իմ մեղաց պատիժն է արդար:
Եվ կրկրեմ միշտ այդ նզովքը վերաս,
Քանի որ մարդ եմ ես լի կրքերով.
Մինչև որ փրկարար իմ վերջին օրհաս
Կրգոցե հավերժ աչունքս քնով:

19 հունվ. 1886.